ՆՈՐ-ԴԱՐ

№ 6 ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 20 Յունվարի **1889** Ուրբաթ 20 Յունվարի ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 6

Տարեկան 10 րուբլի, վեց ամսով՝ 6 րուբլի, երեք ամսով՝ 3 ր. 50 կ., ամսով՝ 1 ր., համար՝ 5 կոպէկ։ Բաժանորդ. գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամէն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամէն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., րեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.—Մեր դպրոցների վարչութեան վերաբերութեամբ։
Էրցհերցօգ Րուդոլֆ։
Ծանուցումն։
Քրոնիկոն. — Լուրեր Մատենախօսութիւն։
Թղթակցութիւններ. — Սիմֆերոպոլ.
Քաղաքական. — Քաղաքական լուրեր։ Խառն Լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

Թիֆլիս, 19 յունվարի 1889.

ՄԵՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐՈՒԹԵԱՄԲ

Անցեալ տարի «Նոր-Դար»-ը մի քանի առաջնորդողներում իւր խորհրդածութիւններն անելով մեր դպրոցների կազմակերպութեան մասին, արել է և իւր առաջարկութիւնները մեր դպրոցների առաջադիմութեան գործը աւելի օգտաւէտ և նպատակայարմար ճանապարհի վրայ դնելու համար։

Որովհետև հոգաբարձական հաստատութիւնը մեր դպրոցների կազմակերպութեան մէջ նշանաւոր և վճռողական տեղ է բռնում, մենք տարւայ վերջումը կրկին անգամ առաջարկեցինք փոխել մեր դպրոցների վարչութեան մէջ տիրող «խաչը», որպէս զի դպրոցական գործը առանց խոչընդոտների առաջ ընթանայ և վերջանան մեր դպրոցների անվերջ տեսչական խնդիրները, ուսուցիչների և հոգաբարձուների վէճերը, որոնք շատ վնասում են դպրոցական գործին և ապարդիւն հանում դպրոցների վրայ վատնած թէ փողերը, թէ ժամանակը և թէ ջանքը։

Բայց ասելով, որ պէտք է փոխել դպրոցներում տիրող սիստէմը՝ մենք չենք ուզում ասել, որ հոգաբարձութեան հաստատութիւնները ոչնչանան, այլ ևս հոգաբարձուներ չ՚ընտրուին, ընտրութեան իրաւունքը խափանուի։ Ոչ, Աստուած մի արասցէ, որ մենք այդպէս բան մտածենք։

Մենք ուզում ենք հոգաբարձական հաստատութեան, ընդհանրապէս մեր դպրոցների վարչութեան և կազմակերպութեան համար այնպիսի մի սիստէմ, կարգ, որով կարելի լինէր մեր դպրոցներում մինչև այսօր յայտնուող չարիքների առաջն առնել և գործը կարգին առաջ տանել։

Նոր սիստէմ, նոր կարգ ասելով, մենք այդ ենք ուզում և ոչ թէ հոգաբարձական հաստատութեան կամ ընտրութեան իրաւունքի խափանումը։ Եւ կարող է մի՞թէ «Նոր-Դար»-ը այդ ցանկալ։ Մեր հոգևոր կամ եկեղեցական դպրոցները պատկանում են եկեղեցուն։ Արդ, հայոց եկեղեցին կազմում են աշխարհականները և հոգևորականները միասին։ Առանց մէկի կամ միւսի եկեղեցին գոյութիւն չունի, ուրեմն եկեղեցին ինքը ժողովուրդն է իւր ամբողջութեամբ։ Այդպէս է ուսուցանում Հայաստանեայց եկեղեցու վարդապետութիւնը մեզ և այդպէս ենք ընդունում և ճանաչում մենք մեր եկեղեցին։ Բայց գիտենք, որ Հայաստանեայց եկեղեցու հիմքը—ընտրութիւնն է։

Հետևաբար եթէ մենք ընտրութեան սկզբունքի դէմ լինէինք, պէտք է որ դէմ լինենք մեր ազգին, մեր ժողովրդին, ուրեմն և մեր եկեղեցուն։

Այդպէս բան չկայ և կարող չէ լինել։

ԷՐՑՀԵՐՑՕԳ ՌՈՒԴՈԼՖ

Այսօր մեր ստացած մի հեռագիրը խորը սուգի մէջ է ձգում Աւստրիական կայսերական ընտանիքը և ամբողջ Աւստրիան, մեծ վիշտ պատճառելով եւրոպական արքայական և իշխանական բոլոր տոհմերին։ Հաբսբուրգեան տան շառաւիղը՝ Աւստրիական կայսերական գահի ժառանգը՝ Էրցհերցօգ Րուդոլֆը որսի գնացած ժամանակ յանկարծակի մահով մեռնում է։

Նորերս էր, որ Աւստրիայի կայսրը՝ իւր ժողովրդից սիրուած բարի Ֆրանց Յօզէֆը իւր գահակալութեան քառասուն ամեակը կատարեց առանց աղմուկի պահպանելով իւր կայսրութեան մէջ խաղաղութիւնը և վայելելով իւրեն հպատակ ազգերի սիրոյ և հաւատարմութեան ցոյցերը։ Այժմ 58 տարին լրացրած կայսրի համար մահու հարուած է —իւր որդու՝ թագաժառանգի մահը։

Էրցհերցօգ Րուդոլֆը երիտասարդ ծաղիկ հասակումն էր. նա դեռ երեսուն տարեկան չկար. պսակուած էր աւելի երիտասարդ պրինցեզ Ստեփանիի՝ Բէլգիայի թագաւորի դստեր հետ։ Երիտասարդ ամուսինները միմեանց սիրում էին և մեծ ապագայ էր սպասում դրանց։

Իբրև աւստրիական գահի թագաժառանգ, Էրցհերցօգ Րուդոլֆը ստացել էր իւր ապագայ կոչման համեմատ հիմնաւոր և լաւ կրթութիւն. նա խօսում էր աւստրիական երկրներում ապրող ազգերի գրեթէ բոլոր լեզուներով. ունգարական լեզուին նա այնքան հմուտ էր, որքան գերմանականին կամ ֆրանսիականին. ունգարացիները նրան իւրենցն էին համարում։

Իբրև ապագայ կայսր, ստանալով և զինուորական կրթութիւն և ուսումնք, նա զրկուած չէր ընդհանուր կրթութիւնից, ուսումնքից. ընդհակառակն այդ կողմից երիտասարդ թագաժառանգը մեծ հմտութիւն էր ցոյց տալիս և գրելու, նկարագրելու, գիտելու տաղանդ։ Նա մի քանի գրքեր ունի յօրինած. ինքը իբրև լուսամիտ և բազմակողմանի զարգացած իշխան, առանձնապէս հովանաւորում էր գեղարուեստները, գրականութիւնը, մամուլը. արուեստագէտները, մանաւանդ գրականութեան մշակները և ընտիր հրապարակախօսները վայելում էին նրա յարգանքը։

Արուեստների հանդէսները, հրապարակախօսների խնջոյքները կը պատուէր միշտ էրցհերցօգ Րուդոլֆը իւր ներկայութեամբ։ Այդ հանդէսների ժամանակ խօսելով նշանաւոր արուեստագէտների և յայտնի հրապարակախօսների հետ, զարմացնում և հիացնում էր դրանց իւր խելացի, հմուտ, սուր նկատողութիւններով։ Այդ նկատողութիւններից յայտնւում էր, թէ գահաժառանգը որքան ընտիր ճաշակ ունի, որքան բազմակողմանի զարգացած է և ինչպիսի հետաքրքրութեամբ հետևում է գեղեցիկ արուեստներին, գրականութեանը և մամուլին։

Խորը ցաւակցութեան արժանի կայսր Ֆրանց-Յօզէֆի հետ, կարելի է ասել, ամբողջ Աւստրիան մեծ յոյսեր էր դրել Աւստրիայի ապագայ թագակալի վրայ—և այդ յոյսերը, այդքան երկար տարիների ընթացքում պատրաստած, մեծացրած և գգուած յոյսերը միանգամից, մի կոյր հարուածից ոչնչացան։ Կարելի է երևակայել, թէ Ֆրանց-Յօզէֆ կայսրը անսպաս իւր ժառանգի մահուան բօթը ստանալով, ինչպէս շանթահար է եղած. կարելի է երևակայել, թէ ինչպէս խոցոտուած է Հաբսբուրգեան ամբողջ տունը և ինչ խորը վշտով համակուած է ամբողջ Աւստրիա-Ունգարիան անսպաս և յանկարծակի իմանալով էրցհերցօգ Րուդոլֆի մահը։

1849-ից սկսած բազդի ինչպիսի ծանր հարուածներ է կրել Հաբսբուրգեան կայսերական տունը, որ եւրոպական արքայական տներից ամենից հինը և բարձրն է։ Ինքը Ֆրանց-Յօզէֆը յեղափոխութեան վրայից անցնելով իբրև 18 տարեկան իշխան բարձրացաւ գահը։ Էրցհերցօգ Մաքսիմիլիանը՝ Ֆրանց-Յօզէֆի եղբայրը, որքան յայտնի և սիրելի Աւստրիայն իւր խելքով և ազնիւ և ընտիր հոգեկան յատկութիւններով, զոհ գնաց Մեքսիկայում Նապօլէօն III-ի նեղ և փոքրոգի քաղաքականութեանը և մարշալ Բազէնի ստոր, չահամոլ և նենգամիտ կրքերին. Մաքսիմիլիանին իբրև Մեքսիկայի կայսր՝ մահուան դատապարտեցին 1867-ին և մի երկու հասարակ մարդկանց հետ միասին գնդակահար արեցին։ Մեքսիկայի անսիրտ նախագահը չկամեցաւ գթալ դժբաղդ կայսրին։ Մաքսիմիլիանի ամուսինը, Բէլգիայի թագաւորի քոյրը՝ պրինցեզ Մատիլդան մինչև վերջերս էլ, ոչինչ տեղեկութիւն չունենալով Մաքսիմիլիանի մահից, սպասում էր իւր ամուսնուն. նա սիրուց և վշտից խելագարուել էր։

Աւելորդ է ասել, թէ այս դժբաղդութիւնները ինչպիսի խորը տպաւորութիւն պիտի թողնէին Ֆրանց-Յօզէֆի, հպարտ Հաբսբուրգի տան վրայ։

Այնուհետև մի ուրիշ մեծ դժբաղդութիւն խորը խոցեց Հաբսբուրգեան տունը։ Ֆրանց-Յօզէֆի քեռու՝ էրցհերցօգ Ալբրէխտի վերին աստիճանի գեղեցիկ, կրթուած, լաւ ապագայ խոստացող երիտասարդ աղջիկը՝ Մատիլդը իւր 17 տարեկան հասակում, անաչառ և կոյր բաղդի բերմունքով մեռաւ։

Պրինցեզ Մատիլդը պալատի մի պատուհանին թէկ ընկած խօսում է իւր մի ազգական պրինցի հետ և կատակներ անում. այդ րոպէին ինչպէս է պատահում, մի չարաբաղդ լուցկիի վրայ կոխում է նա ոտքը. լուցկին վառւում է և պրինցեզի բարակ գազէ շղջազգեստը բռնկում. մինչև որ օգնութեան կը հասնէին, խեղճի մարմինը կրակից սարսափելի այրւում է։ Բժիշկները ոչինչ չկարողացան անել. դեռափթիթ, գեղեցիկ Մատիլդը անկողնի մէջ ծերունի հօրը գանգատւում է, որ ինքը չէ ուզում մեռնել, դեռ երիտասարդ է, սիրում է ապրել, ուզում է ապրել. «պէտք է ապրեմ, պէտք է ապրեմ», արցունքները աչքերին ասում է պրինցեզ Մատիլդը և ծերունի, այնքան մեծ պատերազմներում յաղթութիւններ տանող հօր գրկումը փակում է իւր աչերը յաւիտեան...

Այժմ յանկարծակի, որսի ժամանակ մեռաւ՝—Էրցհերցօգ Րուդոլֆը։

Անողոք Ճակատագիրը հալածում է այդ մեծ և պատկառելի Հաբսբուրգեան տունը։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Թերթիս բազմաթիւ բաժանորդների ուշ բաժանորդ գրուելովը խմբագրութիւնս ստիպուած է շատ բաժանորդների հասցէները գրել տալ, մինչև որ կը տպուէին։ Այդպիսով հին և նոր հասցէները խառնւում են և պատահում է, որ միևնոյն բաժանորդը երկու օրինակ «Նոր-Դար» է ստանում։ Որպէս զի թերթիս խմբագրութիւնը ի զուր տեղը աւելորդ վնասներ չկրէ և բաժանորդը կանոնաւորապէս կարողանայ ստանալ իրեն հասանելի համարները—խնդրում ենք, որ ներկայ 1889-ը թուականին «Նոր-Դար» ստանալ ցանկացողները շտապեն բաժանորդ գրուել, եթէ չեն կամենում, որ դադարեցնենք համարների շարունակ առաքումը։

ՔՐՈՆԻԿՈՆ

ԳՈՐԻՍԻՑ.—Ինչպէս լսում ենք, Տաթևի արժանապատիւ յաջորդին աջողուել է Բագուից և այլ քաղաքներից հանգանակել Տաթևի հռչակաւոր վանքի նորոգութեան համար 1600 րուբլի. իսկ 1200 րուբլի առանձին ժողոված է՝ Տաթևում արհեստագիտական դպրոց բանալու։ Ցանկանում ենք աջողութիւն.—Վերջապէս պ. Գաւառապետ Սուշչևսկու կարգադրութեամբ պէտք է մի քանի բժիշկներ ուղևորուեն Ղափանի Ղարաբաղի? գիւղը՝ սիֆիլիս վարակիչ հիւանդութեան առաջն առնելու նպատակով, որ 8 տարի է յայտնուել է այնտեղ և մինչև այժմ անուշադիր էր մնացել։

—

Հետաքրքիր էր երկուշաբթի, յունվարի 16-ին կայացած քաղ. խորհրդի նիստը, ուր բաւական ծանրակշիռ խնդիրներ յուզուեցան։ Ինչպէս յայտնի է, Քաղ. Վարչութիւնը Փինանսների մինիստրութիւնից խնդրել էր 156,500 ր. փոխ տալ քաղաքին, քաղաքային ջրմուղի ցանցն ընդարձակելու համար, բայց Փինանսների մինիստրութիւնը մերժել էր։ Որոշուեցաւ կրկին այդ մասին խնդրամատոյց լինել, օգտուելով Թիֆլիսի պ. քաղաքագլխի Պետերբուրգ լինելուց։ Այնուհետև մի քանի որոշումներ անելուց յետոյ, քաղ. խորհուրդն անցաւ Թիֆլիսի տղայոց պրօգիմնազիոնը վեցդասեան դարձնելու խնդրի քննութեան, որի համար քաղաքից նպաստ խնդրւում էր տարեկան 9,784 րուբլի։ Բանը նրանումն է, որ Կովկասի ուսումնարանական շրջանի պ. հոգաբարձուն դիմելով Թիֆլիսի պ. քաղաքագլխին յայտնել էր, թէ սոյն ուսումնարանական տարում Թիֆլիսի տղայոց պրօգիմնազիոնի չորրորդ դասարանն աւարտող աշակերտներին շատ դժուար պիտի լինի ուսումը շարունակելու համար մտնել Թիֆլիսի տղայոց I և II գիմնազիոնների Ե. դասարանները, որովհետև յիշեալ ուսումնարաններում հազիւ թէ տեղ լինի. ուստի պրօգիմնազիոնի աշակերտներին ուսումից չզրկելու համար հարկաւոր է, որ քաղաքը օգնէ պրօգիմնազիոնում երկու դասարան ևս բանալու, մանաւանդ որ պրօգիմնազիոնի աշակերտները համարեա բոլորն էլ տեղացի են. այսպէս օրինակ, ուսումնարանի աշակերտներից 74-ը հայ է, 39-ը ռուս, 25-ը վրացի, 5-ը լեհացի, 10-ը հրէայ և 10-ը եւրոպացի, իսկ այդ բոլոր 163 աշակերտներից միայն 7 հոգին ուրիշ քաղաքից է, իսկ մնացածը թիֆլիսաբնակ։

Կայդանովը առաջարկում է այդ խնդրի ըստ էութեան լուծումը թողնել մինչև քաղաքի հաշուեկշռաը չպարզուի և դէֆիցիտի չափը չորոշուի։

Նիկոլաձէն նրան պատասխանում, որ դէֆիցիտի պատճառով կարելի չէ այդպիսի խնդիր յետաձգել. նա լիովին համաձայնելով Ռօս. Շրջ. պ. հոգաբարձուի առաջարկին, միայն քաղ. խորհուրդը պահանջուած գումարը տալով պէտք է խնդրամատոյց լինի, որ տեղական լեզուները Թիֆլիսի միջնակարգ ուսումնարաններում առաջնակարգ տեղ բռնեն և պարտադիր լինին տեղացիների համար, մինչդեռ հենց այդ լեզուները բոլորովին անուշադրութեան են մատնուած վերջին ժամանակներս։

Եւանգուլեանցը յայտնում է, որ ինքն էր ուզում այդ խնդիրը յարուցանել։ Քաղաքը պարտաւոր է, ամենամեծ զոհաբերութիւններ անգամ անելով, կրթութեան գործում ընդառաջել կառավարութեան լուսամիտ ձեռնարկութիւններին և նրան նիւթական նպաստ տալ, որի քանակութեան մասին կարելի է համաձայնութիւն կայացնել։ Բայց քաղաքային ինքնավարական կանոնադրութեան զօրութեամբ, քաղաքն էլ իրաւունք ունի իւր կարիքներն յայտնելու. ներկայ դէպքում այդ կարիքն

—տեղական հայոց և վրաց լեզուները Թիֆլիսի միջնակարգ ուսումնարաններում տեղացիների համար պարտադիր անելն և կանոնաւոր հիմունքի վրայ հաստատելն է։ Մենք պարտաւոր ենք պ. Հոգաբարձուին խընդրելու, որ նա յանձն առնէ լուսամիտ նախաձեռնութեամբ տեղական լեզուների դասաւանդութիւնը հաստատուն հիմքի վրայ դնելու և պարտադիր դարձնելու։ Այդ լեզուները ներկայումս էլ են աւանդւում, բայց նըրանք պարտադիր չեն. այդ առարկաներից նշանակուած թուանշանների վրայ ոչինչ ուշադրութիւն չեն դարձնում։ Զլլելով այն, որ մայրենի լեզուի գիտութիւնը թարգմաններ կը պատրաստէ, նա սաներին կը կապէ երկրի հետ, կը նպաստէ նրա անցեալը ուսումնասիրելուն, որ օգտակար է Ռուսիայի համար։

Բ ե ւ ա ն դ ո ւ լ ե ա ն ց ը նկատում է, որ այս անգամ յարուցուած խնդիրը նոր չէ. — Քութայիսում օրինակ, ազնուականական բանկը նպաստ է տալիս օրիորդական գիմնազիոնին։

Ն ի կ ո լ ա ձ է ն մատնացոյց է անում այն հանգամանքի վրայ, որ տեղական լեզուների խնդիրը յարուցանելով ամենևին միտք չկայ ռուսական լեզուի տարածման առաջն առնել և միայն տեղական լեզուները տարածել, ընդհակառակն, տեղական լեզուները պէտք է հիմնովին գիտնալ ռուսական լեզուն տարածելու համար, մանաւանդ որ, առանց տեղական լեզուները գիտնալու, կարող չէ մեր երկրում մարդկային կանոնաւոր կեանք զարգանալ։

Ր ո ս տ ո մ ե ա ն ց ը այն կարծիքն է յայտնում, որ Թիֆլիսեցիների աղջկերանց համար աւելի կարևոր է իրենց մայրենի լեզուն գիտնալ, քան թէ ալգեբրայական «անյայտներ»-ի ու «յայտնիներ»-ի խնդիրներ լուծել։

Կ ա յ դ ա ն ո վ ը յայտնում է, որ լիովին համաձայն է արտայայտուած մտքերին և միայն ֆինանսական տեսակէտից դժուարութեան մէջ է։

Ն ի կ ո լ ա ձ է ն առաջարկում է գընահատական տուրքը $^{1}/_{4}$% աւելացնել։

Ե ւ ա ն գ ո ւ լ ե ա ն ց ը նկատում է, որ պ. Կայդանովը դէմ է խնդրին միմիայն ֆինանսական տեսակէտից, բայց մարդուս կեանքի մէջ այնպիսի վայրկեաններ են լինում, երբ նա պատրաստ է ամեն ինչ զոհելու։ Ներկայումս քաղաքային խորհուրդը ամբողջ հասարակութեան ցանկութիւնների արտայայտիչն է և եթէ մեր խնդիրը յարգուի, մենք միջոց էլ կը գտնենք։

Չ ե լ օ կ ա և ը առաջարկում է խնդրի վրայ աւելացնել նաև, որ տեղական լեզուները պարտադիր լինին բոլոր դասարաններում։ 1802 թ.—1871 թ.-ը պարտադիր էր։ Քաղաքը, որքան հարկաւոր լինի, կարող է օգնութեան հասնել, եթէ միայն հայոց և վրաց լեզուի դասաւանդութիւնը կրկին պարտադիր կը լինի։

Քաղաքային խորհուրդը միաձայն որոշեց պ. Հոգաբարձուին հաղորդել, որ քաղաքը սիրով կ'օգնէ ժողովրդական կրթութեան գործին, եթէ կարգադրութիւններ կը լինին տեղական լեզուները միջնակարգ ուսումնարաններում հիմնովին փոփոխութեան ենթարկելու, և խնդրել պ. Հոգաբարձուին իւր վրայ առնել այս մասին ուր հարկն է խնդրամատոյց լինելու նախաձեռնութիւնը։

—

Սովորաբար լրագիրը միմեանցից լուրեր են քաղում, բայց ու՛ր լրագրից լուրը քաղում են, այդ լրագիրը յիշւում է. այդ ընդունուած է և. այդպէս է կարգը։ «Նոր-Դար»-ը այն «արտօնութիւնն» է վայելում, որ շատ անգամ նրանից քաղած լուրերը հրատարակում են ուրիշ թերթեր առանց յիշելու աղբիւրը։ Եթէ մենք մի քանի տարուայ ընթացքում այդ Ճանապարհով «Նոր-Դար»-ից քաղած լուրերի և այլ գրուածների տեղեկացուտ կազմէինք, դա մի պատկառելի բան դուրս կը գար։ Այսպէս, մի տեղական թերթ Սալզբուրից մեր թղթակցի գրած ընդարձակ և հետաքրքիր նամակը արտատպել էլ բառերի փոփոխութիւններ անելով և միտքը չփոխող տողեր աւելացնելով իբրև Ախալքալակից ստացած թղթակցութիւն։ Մի ուրիշ թերթ մի անգամ բանը այնտեղ էր հասցրել, որ «Նոր-Դար»-ից երկու ամբողջ երես հեռագրեր և նոյնպէս թղթակցութիւն արտատպել էր, առանց աղբիւրը յիշելու, բոլոր այն սրբագրական սխալներով, որ «Նոր-Դար»-ի մէջ սպրդել էին։ Մինչև օրս էլ լուրը քաղել և աղբիւրը չյիշելը շարունակւում է։

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ. — Տեղիս ծխական դպրոցի երկու ուսուցիչներն աւետիս ման եկան տեղացի երկու երիտասարդների հետ յօգուտ դըպրոցների. զուտ արդիւնք գոյացաւ 25 րուբլի, որ և յանձնուեցաւ գանձապահ-Հոգաբարձու մեծ. պ. Թաթուզեանցին։ Նոյն գիշերը յարգելի պ. Ներսէս Տէր Ցարութիւնեանցը խոստացաւ ուսուցիչներին, իւր քանսէր(?) տարի վճարել դպրոցի մի չունևոր աշակերտի տարեկան բոլոր ծախքը։

—Ցրագալոյցի երեկոյեան ծխական դպրոցի երգեցիկ խումբը զպրութիւն արեց, Դանիէլի գիրքը կարդացին չորս աշակերտներ. գործակալ Հ. Կուսիկեանցն էլ քարոզ կարդաց ժողովրդին ըստ աւուր պատշաճի։ Միւս օր պատարագին Հ. Կուսիկեանցը դարձեալ քարոզեց. երգեցիկ խումբը բացի դպրութիւնից «Ով զարմանալի» երգեց, որ բաւական աջող անցաւ։

—

Ներքին գործերի մինիստրութեան բժշկական դեպարտամէնտը դիմել է բոլոր դաւառութիւնների կոնսիստորիաներին խնդրելով, որ պատուիրեն հոգևորականներին յորդոր կարդալու ժողովրդին, որպէսզի ժողովուրդը, «Нов.»-ի ասելով, ծաղիկ պատուաստէ իւր զաւակներին։

—

Պալտաւայի նահանգը, հրէաներին քրիստոնէութեան դարձնելու համար, «Нов. Вр.»-ի ասելով, այս տարի պէտք է առանձին միսիօնէր ունենայ(?)։

—

Ցունվարի 22-ին Թիֆլիսի ժողովարանում մտադրութիւն կայ Թիֆլիսի հրէաների բարեգործական ընկերութեան օգտին կազմելու կօնցէրտ—պարեկոյթով։

—

ԲԱԳՈՒԻՑ.—Տեղիս գիմնազիոնի դըրան մօտ պօստային մի արկղ է կախած, որ նամակների ծրարներ են ձգում։ Մի քանի աշակերտներ սովորութիւն են չինել, կանգնում են պօստայի արկղի մօտ և նամակաբեր ծառաներից ծրարները վերցնում հասցէները կարդալով, արկղի մէջ ձգելու նեղութիւնն իրենց վրայ առնելով։ Այդ մի քանի աշակերտների կամաւոր ծառայութիւնը, պատահում է, որ արժան չէ նստում նամակ ուղարկողներին։ Ցանկալի էր, որ պօստային վարչութիւնն նամակի արկղը մի ուրիշ տեղ կախել տար. օրինակ այժմեան տեղից մի փոքր բարձր, էկլեսի(?) դռնապանի մօտ։

—Բաժինքով աղջիկ ուզելը և աղջիկ տալը Թիֆլիսին էր պատկանում, այժմ Բագուն այդ կողմից մրցութեան մէջ է մտել Թիֆլիսի հետ։

Երիտասարդներ, որոնք ուզում էին կ ա ր ի է ր անել, ձոխ ապրել և կապեր կապել, վազում էին Թիֆլիս աղջիկ ուզելու։ Այդտեղ տալիս էին բաժինք, փող, տուն և այլն։ Այժմս Բագուն էլ բաժինք է տալիս, փող է տալիս, և' փող և' բաժինք ուզող երիտասարդներ է որոնում... Ինչ անեն այն աղջիկները, աւելացնենք, այն լաւ աղջիկները, որոնք բաժինք չունեն, փող չունեն։

—

Ծառայ և աղախին վարձելու խընդիրը առօրեայ կեանքի մէջ առաջնակարգ խնդիրներից մինն է։ Շատ անգամ ամենամեծ անախորժութիւններ են առաջ գալիս թէ տէրերի և թէ սպասաւորների համար, մի քանի պայմանների պակասութեան պատճառով։ Իսկ դատարանները խօ միշտ լիքն են տէրերի և սպասաւորների միջև ծագած անհամաձայնութիւնների գործերով։ Այդ անհամութիւնների առաջն առնելու համար մեծ քաղաքներում կան զանազան միջոցներ գործադրուած։ Բայց մինչև այժմ Թիֆլիսում չկայ ոչ մի յարմարաւոր միջոց։ Այդ պատճառով Թիֆլիսի փոխ-քաղաքագլուխ պ. Իզմայիլեանցը դիմել է Վարշաւայի ոստիկանութեան, խնդրելով, որ իրեն ուղարկեն մանրամասն տեղեկութիւններ և օրինակներ այն բոլոր միջոցների մասին, որ գործադրւում է Վարշաւայում, նոյնպէս և կարծիք այդ միջոցների օգտաւէտութեան և անօգուտ լինելու աստիճանների մասին։

—

Բացի Բագուի հասարակութեան և հայերի կողմից գալու պատգամաւորութիւնից, Թիֆլիս պէտք է գայ նաև Վլադիկաւկազի քաղաքային խորհրդի կողմից մի պատգամաւորութիւն։

—

Պետերբուրգում անցեալները քընըւում էին 8 հոգի, որոնք կեղծ մի, երեք և հինգ րուբլիանոց թղթադրամներ տարածելու համար էին դատապարտւում։ Գլխաւորը եղել է լեհացի Իոսիփ Ադամով Նարվիլլօ անունով մէկը։ Նրա բնակարանը խուզարկելով, 5000 րուբլու կեղծ թղթադրամ են գտել. Նա ինքն էլ անկեղծօրէն խոստովանուել է, որ նա այդ արհեստով արդէն 18 տարի է, որ պարապում է և թէ այդ ժամանակամիջոցում, «Сиб. Вѣд.»-ի ասելով, 200,000 րուբլու կեղծ թղթադրամ է տարածել։

—

Ցունվարի 15-ին մի պարոն ինքն իրեն ձգեց Քուրը՝ խեղդամահ լինելու որոշումով. բայց ընկնելով սառոյցի վրայ, միայն ոտներն ու ձեռները ջարդուեց։ Նրան տարան հիւանդանոց։ Իսկ անցեալներն էլ մի կին փորձեց ինքն իրեն Քուրը ձգելու, բայց այդտեղ գտնուած քաղաքապահն արգելք եղաւ նրան։

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ. — Անցեալները պատահեցայ Եկատերինօդար, ուր խիստ ձմեռ է տիրում։ Եկատերինօդարի ձմեռը ուրիշ տեղի ձմռան չէ նմանում, այստեղ ցուրտ քամիներ են և գետինը առանց ձեան վերմակի է. այդ անխնամ ձմեռը տարածուած է այդ քաղաքի շուրջը գտնուած շատ և շատ գիւղերում, հարիւրաւոր վերստ հեռու, իսկ մեզանում—Վլադիկաւկազում, թէ քաղաքը և թէ գիւղերը իրենց դաշտերով ծածկուած են թանձր ձիւնով. ամիսներ են՝ ինչ-որ սահնակներն են բանում. 10—20 աստիճան ցուրտ է այժմ մեզանում ըստ Ռեօմիւրի ջերմաչափին։ Ջմեռուկների համար անտանելի ձմեռ եղաւ այս տարի, ամեն բան էլ բաւական թանկ է, մանաւանդ փայտը։

—

Ներկայ տարուայ նման խիստ ձմեռ Անգլիական երկրներում դեռ տեսնուած չէր։ Այդ է պատճառը, որ ժողովուրդը յանկարծակիի գալով, սկսեց վառել նաև երկաթուղիների ուղղութեամբ ձգուած ծառերը, որոնք տնկուած են երկաթուղու Ճանապարհը աւազից պաշտպանելու համար։ Այսպիսի դժուարութիւնների առաջն առնելու համար, «Рус. Кур.»-ի ասելով, գեն. Աննենկովը խնդրամատոյց է լինում, որ տեխնիկական ընկերութեան մէջ մրցանակ առաջարկուի յարմարաւոր նաւթի վառարան շինելու համար, որպէսզի այդ վառարանը հնար լինի տարածել Անգլիական երկրներում, որովհետև բացի նաւթից աւելի յարմարաւոր նիւթ չկայ վառելու։ Բացի այդ խնդրամատոյց է լինում, որ սոյն գարնան բացուելով, ընդհանրապէս անապատում և երկաթուղային գծերի շրջակայքում արագութեամբ անտառներ տնկեն։

—

«Նոր-Դար»-ի սոյն համարում բաց ենք արել «Տեղեկատու» վերնագրով մի ստորաբաժին, որի մէջ, ընթերցողների յարմարութեան համար, այսուհետև զետեղուած կը լինեն կապալների և այլ յայտարարութիւնների մասին տեղեկութիւններ։ Դարձնում ենք մանաւանդ առևտրականների ուշադրութիւնն այդ բաժնի վրայ։

—

Մի քանի պարոններ «Նոր-Դար»-ի մի քանի օրինակի բաժանորդագինը ուղարկելով նուիրել են զանազան հաստատութիւնների։ Միւս անգամ կը գրենք նուիրատուութեան մանրամասնութիւնը։

—

ԴԵՐԲԵՆԴԻՑ աւագ ուսուցիչ պ. Ցարութիւն Մարաղեանցը մեզ գրում է. —«Ցունվարի 5-ին, Ծննդեան գիշերը քանի մի երիտասարդների ընկերակցութեամբ «Խ ո ր հ ո ւ ր դ մ ե ծ» ասելու շրջելով, բարեգործական նպատակով հաւաքեցինք 230 րուբլի, որից քանի մի մանր ծախսեր (մոմի և այլն) դուրս գալով, չորրորդական մասը—56 ր. 75 կ. յատկացրինք տեղիս սուրբ Մեսրովբեան ընթերցարանին, իսկ մնացեալ 170 ր. 25 կ. յանձնեցինք հայոց ուսումնարանի գանձապահ-Հոգաբարձուին։ Ահաւասիկ և պպ. նուիրատուների ազգանունները, որոնք իրենց ձեռքով ստորագրել են մեզ մօտ գտնուած կանոնաւոր ժապաւինեալ մատեանում. Պպ. Մ. Գալայեան 20 ր., եղբ. Շահինջան. 15 ր., Պ. Ս. Միսկին. 10 ր. Ց. Մուսայէլ. 10 ր., Մ. Ցովակիմ. 10 ր., Ց. Աւշար. 10 ր., եղբ. Սողոմոն. 10 ր., Խ. Եղիազար. 6 ր., Գ. Իշխան. 6 ր., Աբր. ք. Սպանդուն., Մ. Աւագ., Ս. Գօզալ., Ց. Ազար., Ա. Աբրահամ., Ն. Պօղոս., Մ. Սարուխան., Ց. Աստուածատրեան, եղբ. Խաչուլ., Դ. Օրբէլ., Ց. և որդիք Օրբէլեան և Շահպազ. 5-ական րուբլի. Ց. Բէկլար., Կ. Մելիք., Ս. Ալմազ., Ց. Մելիք-Շահնազար., Գ. Ջիվալեան, Գրիգոր., Ա. Աւետ., Ա. Ջալար., Գ. Փանուս., Ց. Ապրես., Գ. Ամիր., Ի. Բաբայեան և Միրզայ. 3-ական րուբլի. Մ. Մելիք., Ա. Ստեփան., Կոստան., Ա. Միրզայ., Ց. Տէր-Ցովակիմ., Մ. Տէր-Մարտիրոս., Ս. Տէր-Գրիգոր., Դ. Շինդ., Խուբլար., Ց. Բայէնդուր., տիկին Ս. Մելիք-Շահնազար. 2-ական րուբլի. Ց. Մարագ., օր. Մ. Մակար., Ց. Բէկլար., Ստեփաննոսեան, Ա. Եղիազար., տ. Մելանիա Գօզալ., տ. Վ. Աւետ., Գիւլնազար., Հ. Ղազար., Գ. Չէրկէզ., Ա. Դաւալ., Ա. Ազատ. մի-մի րուբլի։ Ընդ սմին յայտնում եմ իմ շնորհակալութիւնը պարոնայց Մ. Գալայեանին, Ազատեանին, Տարեկանեանին, Կ. Մելիք-Շահնազարեանին, Սողոմոնեանին և Ամիրեանին, որոնք չնայելով դրսում տիրող սաստիկ սառնամանիքին, յանձն առան այս գործը առաջ տանելու *)։

—

Կովկասի հանքային ջրերի կառավարութեան գործում կոմիսար նշանակուած կայսերական բժշկական Ճեմարանի պրօֆէսսոր Սուշչինսկին, մայրաքաղաքի թերթերի ասելով, շուտով ուղևորելու է իւր պաշտօնատեղին։ Պարոն Սուշչինսկին մտադիր է հանքային ջրերում բազմաթիւ բարեփոխութիւններ անելու, հետևելով եւրոպական հանքային ջրերում եղած յարմարութիւնների լոգարանների և այլ և շինուածքների վերաբերմամբ, իսկ Պեատիգօրսկում էլ ջրմուղ պէտք է շինել տայ։

—

Մահմեդական ժողովրդի շահերն ի նկատի ունենալով, Անդրկասպեան մաքսատներով արգելուած է, մայրաքաղաքի թերթերի ասելով, օպիում ներմուծելը։

—

Բացի Ուզուն-Ադայից, մաքսատուն հաստատելու մտադրութիւն կայ և Սերախսում։

—

Ռուսաց առևտրական նաւագնացութեան նպաստող կայսերական ընկերութեան վարչութիւնը կազմել է մի զեկուցում նաւթանցքի և նաւթային հում ապրանք արտահանելու մասին, որ պէտք է մատուցուի կառավարութեան։ Շատ ընդարձակ է այդ զեկուցումը։ Զեկուցման եզրակացութիւնն է. ա) հարկաւոր է անպայման արգելել նաւթային հում նիւթի, նաւթային արդիւնաբերութեան մնացորդների և կիսատ մշակուած նիւթերի արտահանութիւնը. բ) պէտք է ազատ թոյլ տրուի արտահանելու մշակուած ապրանքներ, որոնք անմիջապէս գործադրողի ձեռքն է անցնում և ոչ թէ ուրիշ գործարանի՝ մշակուելու համար, և գ) 1889 թ. յունվարի 12-ից յետոյ կասպեան - Սևծովեան նաւթանցքը շինելու համար կազմուելու ընկերութեանը այլ ևս կրկին ժամանակամիջոց չտալ։

—

Մի անգամ «կենդանիների հովանաւորութեան ընկերութեան» ուշադրութիւնն էինք դարձրել այն հանգամանքի վրայ, որ սայլապաններն իրենց սայլին լծած անասուններին չարաչար տանջում են նրանց ոյժից վեր բեռ բարձելով։ Մանաւանդ խեղճ կենդանիներն աւելի տանջւում են զանազան զառիվայր փողոցներում։ Ցունվարի 16-ին էլ մի այդպիսի սայլ անցնելով Մեքայէլեան փողոցով, ինտենդանտային վարչութեան հացի հասած, խեղճ ձին բեռան ծանրութիւնից վեր ընկաւ և տեղն ու տեղը սատկեցաւ։

—

Մի քանի հասարակական հաստատութիւններ դիմել են Թիֆլիսի փոխ-քաղաքագլխին՝ կոմս Լօռիս-Մելիքեանի թաղման առթիւ կարևոր տեղեկութիւններ խնդրելով։ Այդ առթիւ պ. փոխ-քաղաքագլուխը յայտնում է, որ հանգուցեալի մարմինը Թիֆլիսում սպասւում է սոյն յունվարի քանի օրերին(?) կէսերին(?)... կլգբներում(?), ուստի կարևոր կարգ որոշելու համար, խնդրում է յիշեալ հաստատութիւններին և վարչութիւններին, որ իւր ժամանակին

*) Հրատարակելով նուիրատուների սոյն ցուցակը, մի անգամ ևս մեր յայտնում ենք, որ խմբագրութիւնս միմիայն յայտնում է այն նուիրատուների անունները, որոնց նուիրած գումարը խմբագրութեանս միջոցով է նպաստ ... Այլապէս թերթի էջերը անուն և ազգանուններով պիտի լցնէինք։ Խմբ.

յայտնին պատգամաւորութեան կազմութեան մասին։

—

Վարշաւայում հիմնւում է առաջին մասնաւորապէս կանանց դեղատուն, որի գլխաւոր կառավարիչն է կին-ֆարմացեֆտ տ. Բեգոնսկայա։ Դեղատան պրովիզօրներն էլ, «Нов.»-ի ասելով, պէտք է կանայք լինին։

—

Բուխարայում պետական բանկի բաժին հիմնելու խնդիրը վերջնականապէս վճռուած է և, մայրաքաղաքի թերթերի ասելով, արդէն որոշուած է շուտը։

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

—

Ստացանք «Պանդուխտի յիշատակարանից» անունով գրքոյկը, որ տպուած է սոյն 1889 թուին Շուշւում, Միրզաջան Մահտեսի-Ցակոբեանցի տպարանում։ Ինչպէս թուղթը, նոյնպէս և տիպը մաքուր է։

Գրքոյկի նպատակն է, ինչքան հասկացանք, մաքառել հայոց մէջ ամեն տեղ արմատացած «Մատաղի» սովորութեան դէմ, որը, հեղինակի (որ Աշոտ համեստ անուան տակ է ծածկուած) կարծիքով, դէմ է թէ աստուածային և թէ եկեղեցական կանոններին։ Բացի այդ, գրքոյկի մէջ շօշափուած են նաև մի քանի ուրիշ խնդիրներ, ինչպէս է օրինակ, ծխերի վերաբերմամբ քահանաների բռնած և բռնելու դիրքը։

Մենք, ի հարկէ, վերջին խնդրի աւելի ոչինչ չենք կարող ասել, որովհետև դա ամենադժուարալուծելի և կնճռոտ խնդիրներից մէնն է մեր կեանքի մէջ, որ զանազան տեղեր զանազան կազմակերպութիւն է ստացել, և որի մասին ցանկալի է գիտակ անձերի կարծիքները լսել։ Բայց մատաղը ոչնչացնելու դէմ յայտնած կարծիքների աւելի չենք կարող չնկատել, որ կեանքը որքան էլ նիւթապաշտական ուղղութիւններով լեցը լինի, բայց և այնպէս կարելի չէ մերժել, որ հոգեկան մխիթարութիւնը բոլորովին ոչնչացած լինի, ուստի հարկաւոր չէ կեանքի մէջ անդադար նիւթական կողմը զօրացնել։ Մատաղը պապական աւանդ է և գեղեցիկ աւանդ, որ զօրացուցիչ ազդեցութիւն է գործում մատաղի կարօտ հասարակութեան վրայ։ Ուրիշ բան է մաքառել մատաղի միջոցին կատարուող անկարգութիւնների, անաստուածահաճոյ վարմունքների դէմ. կարելի է դուցէ մատաղին աւելի նպատակայարմար ուղղութիւն տալ, բայց ոչնչացնելու մասին աշխատել հարկաւոր չէ։

Գրքոյկի մէջ կան բաւական գեղեցիկ և համակրելի խորհրդածութիւններ. այսպէս օրինակ, խօսելով ոչխարներին մատաղի համար զոհ բերելու մասին, հեղինակը կշտամբում է ոչխարներին, որ նրանք ապրել, կեանք վայելել ցանկանալով հանդերձ, չեն ընդդիմանում իրենց թշնամուն, այլ բաւականանում են իրենց ճենճերը օրպէս բողոք դէպի երկնային Թագաւորի աթոռը բարձրացնելով. «Մահը մահ է, իսկ այն մահն անմահութիւն, սուրբ և յիշատակաց արժանի է, երբ անձնապաշտպանութեան համար է, և այն՝ ազատութեան մէջ»։ «... Դուք կորչում էք, ոչնչանում էք, իսկ ձեր բողոքն արդար է, անմահ է, նա չէ մեռնում»։ «Իսկ դուք ձեր տգիտութիւնից կամ հանգամանքների ակաասութիւնից փոխանակ ձեզ պաշտպանելու, այդ անձնապաշտական (երևի անձնապաշտպանութեան) սրբազան իրաւունքները պաշտպանելու, անհոգաբար թողել էք ուրիշներին, որոնք ի հարկէ խնամում են ձեզ՝ ոչ թէ միայն ձեր ստացուածքը կողոպտելու, այլ և ձեր կեանքն իրենց կեանքի տեղ դոհելու»։ «Ձեր վայրենի եղբայրներն, ազգակիցները հազարաւոր անգամ երջանիկ են ձեզանից. Նրանք ապրում են առանց խնամակալի և գազանների դէմ պաշտպանւում են, կռւում են արիասրտութեամբ և հնարագիտութեամբ»։ Գրքոյկի լեզուն բաւական սահուն է և կանոնաւոր։ Բայց պատահում են և խորդութիւններ, ինչպէս օրինակ, զինքը, կենալ, ժողովրդականք և այլն։

—

Ստացանք «Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան» «Труды» հրատարակութեան № 7—8 (յուլիս և օգոստոսի) ամսատետրները միասին կազմած։ Բովանդակութիւնը բաւական հետաքրքիր է։ Ձեռնըռւած նիւթերը բոլորն էլ շատ կամ քիչ կապ ունին Կովկասի գիւղատնտեսական դրութեան զանազան ճիւղերի մշակութեան և ուսումնասիրութեան հետ։ Իւրաքանչիւր ոք, որ հետաքրքրւում է Կովկասի գիւղատնտեսական դրութեամբ, կարող է բաւական նիւթ գտնել առհասարակ «Труды»-ի մէջ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՍԻՄՖԵՐՈՊՕԼ, 30 դեկտ. — Ամսոյս 28-ին, երեկոյեան, Սիմֆերոպօլի հայագաւառ հայոց (?) թատրոնը փառաւորութեան և շքոյ մէջ էր, ուր հաւաքուել էին իրենց և կաթոլիկ հայոց, ըստ մեծի մասին, առաջին կարգի ընտանիքն և առանձնականք, ի տես ներկայացման Օստրովսկիի «Свои люди сочтемся» կատակերգութեան, զոր ներկայացուցին հայերէն լեզուով տեղիս հայ թատերասէրներէն հետևեալ անձինք.—պարոն Ց. Զաքեան, պ. Գ. Պապուտճեան, պ. Ց. Գարաեան, օրիորդ Օ. Տրակունեան, օր. Կ. Գարամրգայեան, օր. Գ. Ուզունեան, օր. Ս. Ուզունեան, պ. Պ. Տրակունեան, պ. Լ. Պօյաճեան։

Աններելի մեղք կը համարեմ թողուլ ի լռութեան այն օրուան հանդէսը, և չի հաշւել թատերասիրաց քաջութիւնը, որոնք ցուցնելով թատրոնական բեմին վրայ իրենց անակնունելի կարողութիւնը և յարմարութիւնը յաջողապէս թատերական ներկայացման, ներկայ գտնուող հանդիսականք հասարակութիւնը իւր սրտին գոհունակութիւնը և ուրախութեան նշանը անընդհատ ծափահարութեամբ և կեցցէ աղաղակներով կը յայտնէր։

Կը ներէ ինձ ամենայն ոք, ինչպէս նաև վերոյիշեալ յարգոյ թատերասէրք, զորոնք չեմ ուզեր պարսաւել, և պէտք չէ լքանին, եթէ իրենց թատերասէր ընկերոջը՝ պարոն Ց. Զաքեանին գովասանաց առաւելութիւն մը ընծայեմ ունեցած ընդունակութեանը համար յայտնի մասին, որին բնական ձևերը, մարմնոյն շարժուածքը, դէմքին վրայ ցցուցած զգացմունքը և ձայնին ելևէջութիւնը պակաս չէին, չեմ ըսեր «արդիւնք», այլ արդի առաջին կարգի դերասաններէն։

Տարակոյս չկայ, որ թատերական ասպարէզը քաջ հանդիսանալու համար, բաւական չէ բնութեան տուրքը միայն, այլ անոնց ունեցող թատրոններուն չեմը մաշեցնել պէտք է, զոր յարգոյ պարոն Ց. Զաքեանը կեանքը թէ չէ խնայած։

Իրաւցնէ սիրտ շարժող և—վզացմունք ունեցող ազգասէրին երակներուն վրայ ազդեցութիւն ընող դերասան էր, երբ ներկայացման ամեն արարուածէն ետքը, ազգային ունկընդիր հանդիսականաց խուռն բազմութիւնը արանց և նազելի կանանց, երիտասարդաց և փափկասուն օրիորդաց, վարժատան ընդարձակ սրահը եկած, ուրախութեամբ վեր վար շուռ գալով, իրարու հետ խօսելով քաղցր ժպիտներով հանդերձ հանդիսատ կառանէին, իբրև մի ընտանիք, միոյ ծնողաց սերունդք։—Ո՞ւր էր թէ նմանօրինակ հանդէսներ անպակաս ըլլային մեր մէջ անխտիր, վասն զի իրարու հետ յաճախ տեսութիւնով բարեկամութիւն կը ծնանի, բարեկամութեան կապը սէր, սէր ըլլալէն ետքը դիւրաւ կարելի է իրարու միտքը հասկնալ, և ուղիղ տրամաբան մըտածութեամբ վերջապէս ճշմարտութեան դուռը գարնել։

Կարելի չէ առանց մասնաւոր, գովասանաց և խորին շնորհակալութեան լռութեամբ յիշեալ վարժատան մեծարգոյ հոգաբարձութիւնը, և ներկայացումը ըստ կարգի ըլլալուն համար արժանապատիւ աշխատողները, որոնք ձմեռ ատեն ճակատներնուն քրտինքը չի խնայելով, ամենայն ջանքերնին թափեցին ներկայ եղող հայ հասարակութիւնը ըստ ամենայնի գոհ ընելու. այս նպատակաւ առանձին սենեկի մը մէջ կը մատակարարուէր ըստ փափաքանաց կամեցողին թէյ, անուշեղէն և այսոց նըման բաներ, և ի հատուցումն իւրաքանչիւրին խնդրածին, ամեն մարդ սրտին բզխածը կը հատուցանէր։ Նըդեր են անձինք, որ մէկ գաւաթ թէյի համար մինչև 10 րուբլի ընծայեր են ի վարձ, որովհետև ներկայացման նպատակը և անոր պտուղը, առաւ եկած ամեն մուտքը տեղւոյս հայադաւան և կաթոլիկ հայոց վարժատանց ի նպաստ պիտի ծառայէ։

Ի վերջ թատերական ներկայացման, կամ թէ առանց չափազանցութեան ըսել, ազգային հանդէսին, ունկնդիր հասարակութիւնը իւրեն ծափահարութեան արձագանքներուն մէջէն գոհ սրտով ցրուեցաւ թատրոնէն, տեսակ տեսակ խորհրդածութիւններ ընելով։

Հ. Ն. Զ.

Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

ԱՒՍՏՐԻԱ-ՈՒՆԳԱՐԻԱ. — Ցունվարի 6-ին Բատտէնբերգեան պրինց Ալէքսանդրը, իւր ադիւտանտ գեներալ-մայոր Րոսմանի ուղեկցութեամբ, իւր վախճանած հօր չքանշանները աւստրիական կայսրին վերադարձնելու համար Վիեննա եկած լինելով, աւստրիական արքունիքի կողմից սիրալիր ընդունելութիւն է գտել։ Պրինցի մասնաւոր տեսակցութիւնը կայսրի մօտ տևել է $^3/_4$ ժամ, որի միջոցին պրինցը հագած է եղել աւստրիական դրագունների համազգեստը, որին չէֆ էր իւր հայրը։ Նա պալատ ուղևորում է արքունի կառքով։ Ինքը կայսրը և կայսերական տան անդամները փոխադարձ այցելութեան գընացին պրինցին, իսկ երէկոյեան կոմպրինց Րուդօլֆի ապարտամէնտում ճաշ էր կազմուած ի պատիւ հիւրին։ Պրինցն ի միջի այլոց այցելել է Կումբերլէնդեան հերցօգին և հերցօգուհուն։

Պրինցի Վիեննա գալը և նրան եղած սիրալիր ընդունելութիւնը Վիեննայի քաղաքական շրջաններում զանազան խօսակցութիւնների նիւթ է դարձել։ Ոմանք ասում են, որ պրինցը մտադիր է աւստրիական զինուորական ծառայութեան մէջ մտնելու, իսկ ուրիշներն աւելի ևս հեռու են գնում հաւատացնելով, որ պրինցը, գահից հրաժարուելուց յետոյ, իւր բըռնած արժանավայել դիրքով, քաւեց իւր նախկին մեղքերը և կրկին բոլգարական գահի հնարաւոր թեկնածու դարձաւ։ «Պէտք է նկատել,— գրում են Վիեննայից «Нов.»-ին,—որ Ռուսիայում բարեկամ տրամադրութիւն է սկսուել դէպի պրինցը։ Կոբուրգի շանսերը խախտւում են համարւում»։

ԲՈԼՂԱՐԻԱ. — Կոբուրգեան պրինց Ֆերդինանդը ճանապարհորդում է իւր երկրի մէջ՝ ժողովրդի ցաւերին և կարիքներին մօտիկ ծանօթանալու և դարման անելու համար։ Նա մօտ երեք շաբաթ կը մնայ միայն Ֆիլիպպօպօլսում։ Այդ միջոցին Բոլղարիայի սոֆիայի աստիճանի հոգևորականները —քահանաներն ուղերձներ են պատրաստում նրա համար։

ԻՏԱԼԻԱ.—Աւստրիական բոլոր եպիսկոպոսները միասին ուղերձ էին ուղարկել Լևոն XIII պապին։ Այդ ուղերձը, որ լատիներէն է գրուած, հրատարակուել է «Observator Romano» թերթի մէջ. եպիսկոպոսները իրենց ուղերձի մէջ յայտարարում են, թէ որպիսի նեղ դրութեան մէջ է գտնւում ս. Պետրոսի Աթոռը և թէ հարկաւոր է այդ աթոռին վերադարձնել իւր աշխարհական իրաւունքները։ Քաղաքական շրջաններում բաւական խոր տպաւորութիւն է գործել այդ ուղերձը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

(Մեր երկրի կեանքից)

—

Պոստային հետաքրքիր դէպք կամ պոստային հրաշք. — Մեղրիում պօստատուն, պօստային հաղորդակցութեան գիծ չկայ։ Մեղրին Օրդուբաթից մօտ 30—35 վերստ հեռաւորութեան վրայ է գտնւում և մեղրեցիներն իրենց նամակները պօստ գցել կամ պօստից ստանալու համար, պէտք է գնան Օրդուբաթ կամ խնդրեն պատահական գնացողին իրենց ծառայութիւն մատուցանել։ Մի այդպիսի պատահական գնացող պօստից ինձ բերեց, դեկտեմբերի 12-ին, և երկու նամակ հետևեալ հասցէներով.

ա. Въ Г. Петербургъ. Центральная Гостинница. Его Высокородію Георгію Михайловичу Тамамшеву.

բ. Въ городъ Бѣлгородъ Курской Губер. въ слободу Савину Получить Г. Ивану Василичу Першину Спиридачию Андрею Аликсеивичу Трофимову. (Հասցէները արտագրեցի ամենայն ճշդութեամբ)։

Աւելի հետաքրքրականն այն է, որ նամակների ծրարի վրայ պօստային կնիք չկար և նամակաբեր նամակների գոյութեան մասին միայն ինձ յանձնելու ժամանակ իմացաւ, իմ հարցից յետոյ։—Իւրաքանչիւր նամակի վրայ կպցրուած էր 7 կոպէկանոց նամականիշ։ Հասցէները միատեսակ ձեռքով չէր գրուած։

Նամակների արտաքին տեսքին և հասցէին նայած, կասկածում եմ նամակները մինչև անգամ Թիֆլիսից լինի կամ մի այլ քաղաքից, և այն ժամանակ մնում է զարմանալ, զարմանալ և դարձեալ զարմանալ։

Պատմածս իրողութիւն է, անեկդոտ չէ. իբրև հաստատութիւն ասածներիս մինչև անգամ մի բան էլ աւելցրի հասցէների տակ»,— X.

***

Չինական սնոտիապաշտութիւն.—Սինգապուրից ստացուած լուրերին նայելով, չինացիների մէջ ներկայումս տարածուած է մի յիմար լուր, թէ գաղտնի հրաման է արձակուած, որ կտրեն բոլոր նրանց գլուխը, որոնք թէ կուզ պատահարար կը լինին քաղաքից դուրս, շրջակայքում։ Ստրեյթսեթլմենտի (?) պետութեան պաւակները հաւատացած են, որ այդ գլուխները հարկաւոր են կառավարութեան հիմք ձգելու համար այն տեղերքում, ուր պիտի կամուրջներ շինուեն, որովհետև, միմիայն գլուխների վրայ հիմնուած կամուրջը կարող է հաստատուն մնալ և աջողութեամբ էլ կատարել կառավարութիւնը, նոյն լուրերին նայելով, ամեն մի գլխի համար 50 դոլլար է նշանակել։ Շատ թանկ է։

***

Թղթէ տաներ. — Ամերիկայում ամեն մի աւետրական գործի, ամեն մի ձեռնարկութեան մէջ ըէկլամը առաջին տեղն է բռնում. այնտեղ հրատարակւում են այնպիսի մեծ թղթերի վրայ հսկայական տառերով տպուած յայտարարութիւններ, որոնց պահպանութեան համար շատ անգամ ստիպուած են լինում ոստիկանութեան դիմելու։ Այդպիսի յայտարարութիւններ տպելու համար գործ են ածում բոլորովին ուրիշ տառեր, որոնք պատրաստւում են կամ փայտից և կամ թղթից։ Ամերիկայում խօսյժմ ամեն բան էլ կարելի է պատրաստել թղթից—դուռ, պատուհան, արկղ, աման, կահ կարասիք, անիւ, տուն, կարաս, տակառ, շիշ և այլն և այլն, որոնք նոյնքան ամուր են լինում և դիմացկուն, որքան և փայտը, նոյն իսկ մետաղը։ Այժմ էլ պատրաստում են տպարանական տառեր նոյն թղթից։ Թղթէ տառերը պատրաստւում են թղթի խմորից, որ շատ փափուկ է լինում, խառնում են հետը պարաֆին կամ եռացրած կանէփի ձէթ։ Այդ բոլորը չորացնում են, փոշիացնում են և ձուլում են. այդ նիւթից ստացուած տառը լինում է նոյնքան պինդ, ինչպէս փայտն է, նոյն իսկ ինչպէս մետաղն է։ «Voltaire» թերթը պատմում է, թէ թղթէ տառեր ձեռք են բերուած և Ֆրանսիայում, բայց ոչինչ գործնական հետևանք չէ ունեցել դա, որովհետև Ֆրանսիան Ամերիկա չէ և Ամերիկայի հսկայական ըէկլամներն ու յայտարարութիւնները Ֆրանսիայում չեն ընդունուած։ Թղթէ տառերն ներկայումս արդէն կատարելագործուած է, բայց նրանց հնարողը միջոց չունի, որ կարողանայ իւր գիւտից օգուտ քաղել։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-ի
ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԱՐԻԶ, 17 յունվարի.—«Matin»-ի ասելով Բուլանժէն յայտարարել է, որ հինգշաբթի նա կը գնայ պատգամաւորների ժողովը, որպէսզի կրկին առաջարկէ պատգամաւորների ժողովն արձակել։

Այսօր առաւօտ մինիստրների խորհուրդը վճռեց,—առանց յետաձգելու առաջարկել ընտրութիւնները շրջանով կատարելու առաջարկը։ Պատգամաւորների ժողովն արձակելու խնդիրը կախուած կը լինի հանգամանքներից, իսկ պլեբէսցիտի առաջն առնելու նախագիծն անհետևանք թողնել։

ՎԻԵՆՆԱ.—Ունգարիայում ամեն տեղ մետինգներ են կազմւում, որոնք բողոքում են զինուորական նոր օրինագծի դէմ։ Երէկ ընդդիմադիր կուսակցութիւնը խիստ յարձակում գործեց Տիսսայի վրայ նրա համար, որ նա գաղտնի ոստիկանութեան անդամներին ուղարկել էր պարլամենտի վերի սրահը։ Այսօր պարլամենտը շրջապատուած է ուսանողներով և ժողովրդով։ Զինուորներին պատուէր է տուած զօրանոցներից չհեռանալ։ Երկիւղ են կրում փողոցային անկարգութիւններից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 յունվարի.—Այսօր Պետերբուրգ կը ժամանէ Հէսսէնի մեծ հերցօգը պրինցէսս Ալիսսի հետ։

«Гражд.»-ը հաղորդում է, որ ֆինանսների մինիստրութիւնը բորսայի կոմիտէտներին առաջարկել է յայտնել իրենց կարծիքները ցորենի առևտրի միջնորդներից տուրք առնելու նախագծի մասին։

ՊԱՐԻԶ.—Բուլանժէն Սենի ընտրողներին ուղղած նամակի մէջ շնորհակալութիւն է յայտնում նրանց եռանդի համար, որով

փշրեցին պարլամէնտական դաշնակցութիւնը և մի հարուածով ոչնչացրին իւր, Բուլանժէի, պըրպարտութիւններն ու զրպարտիչներին։ Պաշտօնական անձերի ազնուութեան և ամբողջ ժողովրդի ձայնատուութեան ազնուութեան վրայ հիմնուած ազգային հասարակապետութիւնն արդէն հաստատուած է համարում Բուլանժէն և կարծում է, որ պատգամաւորների ժողովն այլ ևս չէ կարող չարձակուել և հասարակապետութիւնն այսուհետև բաց է բոլոր մաքուր անձերի առաջ։

ՎԵՆՆԱ.—Աւստրիական թագաժառանգը վախճանեցաւ։

ՎԵՆՆԱ.—«Correspondez Bureau»-ին հեռագրում են, Բադենի մօտ, Մայէրլինգից, ուր թագաժառանգը երէկ չէ միւս օրը երեկոյեան որսի էր գնացել, սարսափելի լուր է ստացուել, թէ նորին մեծութիւնն յանկարծ վախճանեցաւ։

ՓԱՐԻԶ, 19 յունվարի.—Բուլանժէի ընտրուելու լուրի առաջին վայրկեանում արած ապշեցուցիչ տպաւորութիւնը, սկսում է անցնել, — պարլամէնտական պարագլուխները մի կողմ են ձգում գեներալ Բուլանժէն կալանաւորելու և պաշարողական դրութեան մէջ դնելու միտքը։ Կռիւը այժմ տեղի է ունենում կառավարութեան կուսակիցների և օպպորտիւնիստների միջև։ Երէկուանից դա սաստկացաւ ձախակողմեանների և կեդրոնի միջամտութեամբ։

ՎԵՆՆԱ. — Երէկ չէ միւս օր աւստրիական թագաժառանգը կոմս Եօզէֆ Հօյօսի, եգէր Վօդչկայի և լայբ-սեննեկալետ Կօշէկի ուղեկցութեամբ ուղևորեցաւ Մայէրլինգի որսորդական դղեակը, Բադէնի մօտ։ Երէկ Հօֆբուրգում հեռագրով տեղեկութիւն ստացուեց, որ թագաժառանգը տկար է և թէ նա Մայէրլինգում պէտք է գիշերէ։ Այդ առթիւ յետաձգուեց պալատում նշանակուած երէկուայ ճաշը։ Այսօր առաւօտեան ժամը 10-ին օբեր-հօֆմայստէր Բոմբէլը հեռագրով տեղեկութիւն ստացաւ, թէ առաւօտեան ժամը 6-ին թագաժառանգին մահճում վախճանուած են գտել, բայց որովհետև մարմինն արդէն սառել էր, ուստի մահը, յամենայն դէպս, պէտք է կէս գիշերին պատահած լինի։ Բոմբէլը շտապեց զգուշացնելու ժառանգուհի-պրինցէսսին, իսկ նորին բարձրութիւնը, վշտից սպանուածի նման, անմիջապէս ընկաւ կայսրի վրայ։ Բոմբէլն արտակարգ գնացքով Մայէրլինգ ուղևորեցաւ, այնտեղից հանգուցեալի դիակը բերելու համար։

ՎԵՆՆԱ.—Մայրաքաղաքի ժողովուրդը տենդային յուզման մէջ է գտնւում. փողոցները լիքն են ժողովրդով։ Պաշտօնական աղբիւրից առ այժմ միայն մի տեղեկութիւն կայ, թէ էրցհերցօգ Ռուդօլֆը վախճանեցաւ Մայէրլինգում, Բադէնի մօտ. մարմինը երեկոյեան պիտի Վեննա բերուի։ Թագաժառանգի յանկարծամահ լինելու պատճառների մասին ամեն տեսակ լուրեր են տարածւում, — ասում են, որ իբր լէյբ-եգէրը, անզգուշութեամբ, հրացանն արձակել է և կպել է պրինցի ուտին. ուրիշներն ասում են, իբր պրինցը սպանուել է որսորդական կառքից վայր ընկնելիս։ Աւելի հաւանական է այն տեղեկութիւնը, թէ էրցհերցօգ Ռուդօլֆը առաւօտեան դէմ վախճանուած է գտնուել մահճում և թէ նա կաթուածից է մեռել։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

17 Յունվարի 1889 թ.։

Լօնդօն 94,45 ր. 93,85 ր., 94,40 ր.
Համբուրգ 46,30 ր., 46,20 ր.
Պարիզ 37,27 ր., գ. 37,15 ր., 37,25 ր. ս.

Գօլուիմպերեալ	7 ր.	56 կ.	սակ.
Մարս. կուպօն	151 ր.	25 կ.	սակ.
Արծաթ	1 ր.	14 կ.	սակ.
Բօրսային գիս.	$6^3/_4$ և $7^1/_2$%.		
Պետակ. բանկի 5% տոմս.			
1-ին շրջանի . .	98 ր.	50 կ.	գն.
2-րդ	98 ր.	25 կ.	սակ.
3-րդ	97 ր.	87 կ.	գն.
4-րդ	97 ր.	87 կ.	գն.
5-րդ	97 ր.	87 կ.	գն.
Ոսկէ փոխառութիւն	— ր.	— կ.	սակ.
4% տոմսեր .	82 ր.	25 կ.	սակ.
100 և 1000 ր. արևելեան փոխառութիւն 5% տոմսեր.			
1-ին շրջանի .	98 ր.	— կ.	սակ.
2-րդ	98 ր.	— կ.	սակ.
3-րդ	97 ր.	50 կ.	սակ.
Առաջին 5% ներքին փոխառութեան տոմսեր . . .	265 ր.	— կ.	գն.
2-րդ	248 ր.	25 կ.	սակ.
$5^1/_2$% բէնտեր .	102 ր.	— կ.	գն.
Ոսկէ բէնտ . .	169 ր.	62 կ.	գն.
Թիֆ. քաղ. վարկի ընկեր. օբլիգ. . .	— ր.	— կ.	գն.
Պետական բանկի Երկաթուղու բէնտ	— ր.	— կ.	գն.
Ազնուակ. հող. բանկի գրաւաթղթերը	— ր.	— կ.	գն.

Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը հաստատուն է։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Ախալքալաք, պ. Խ. Դ.-ին.—Ձեր գանգատը իրաւացի կը լինէր, եթէ մենք յարգած չլինէինք ձեր խընդիրը։ Առաջին համարը լոյս տեսնելու օրից մինչև օրս ուղարկւում են համարները ընթերցարանին։ Ունենք պօստային վարչութիւնից ստորագրութիւն այդ մասին։ Խնդրում ենք պահանջեցէք այդտեղի պօստային վարչութիւնից համարները։ Զարմացել ենք, թէ ինչու դուք այդպէս էք մըտածել։

Ջուլֆա, պ. Մ. Պ. Պետ.-ին.—Համարները ուղարկում ենք, միայն իմացէք, որ 6 ամսուայ բաժանորդագինը՝ 6 րուբլի է։ Հետևաբար 1 ր. էլ ուղարկեցէք։

Սալեան, պ. բժ. Ա.-ին. — Ձեր յօդուածը ստանք և կ'ուղարկենք ձեզ։ Ձեր ասած պարոնը այս տարի «Նոր-Դար»-ին դեռ բաժանորդ չէ գրուել, ուրեմն և 10 ր. էլ չենք ստացել, որ ձեր ասած տեղը վճարենք։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Բագուի նահանգական վարչութիւնը առաջիկայ փետրվարի 25-ին Բագուի կազեօննայա պալատում նշանակել է աճրդախօսութիւն, երեք օրից յետոյ կրկնաճուրդով, կապալով տալու առաջիկայ 1889 թուին Բագուի նահանգում՝ Ղուբայի, Շամախու, Լենքորանի և Բագուի բանտերի արգելականներին և վերաքննութեան դատապարտուած բանտարկեալների համար իրեղէններ (մահուդ, կտաւ մի քանի տեսակ, ոչխարի մորթէ կիսամուշտակ, ոտքի և ձեռքի շղթայ և այլն) մատակարարելու։

Իրերի յատկութիւնը պէտք է համապատասխանէ բանտային գլխաւոր վարչութեան 1887 թ. № 20 շրջաբերականին։ Կապալով կարելի է առնել մաս առ մաս կամ միասին։ Մասնակցել ցանկացողները պէտք է գրաւական դնեն աճրդի նիւթի արժէքի $^1/_3$ մասը և ներկայացնեն իրենց անւանութեան և այլ վկայաթղթերը։

Թիֆլիսի նահանգական վարչութիւնը յայտնում է, որ փետրվարի 27-ին աճուրդ է նշանակած, երեք օրից յետոյ կրկնաճուրդով, Թիֆլիս-Ալէքսանդրօպօլեան ճանապարհի վրայ Աբուլօ և Սարվանեան գիւղերի միջև, Աւչեթ գետի վրայ, 7,057 րուբլու արժէքով շինուելիք կամրջի շինութիւնը կապալով տալու։ Աճրդախօսութիւնը կը լինի թէ բանաւոր և թէ գրաւոր։ Կապալի արժէքի $^1/_3$ մասը գրաւական պէտք է տրուի կամ բանաւոր կամ թղթադրամով և կամ թոյլատրուած տոկոսաբեր թղթերով։ Պայմանները կարելի է տեսնել Թիֆլիսի նահանգական վարչութեան շինարարական բաժնում ամեն օր, բացի տօն օրերից, առաւօտեան ժամը 9-ից մինչև ժամը 2-ը։

Թիֆլիսի նահանգի պետական կալուածների վարչութիւնը յայտարարում է, որ մարտի 22-ին, Թիֆլիսի նահանգական վարչութեան մէջ, առանց կրկնաճուրդի, պէտք է աճուրդ լինի սոյն յուլիսի 1-ից երեք տարով կապալով տալու համար պետական «Լօչինօ» հողաբաժինը, որ բաղկացած է հերկելու, խոտ հնձելու, բանջարանոցի, պարտիզի և կենդանիներ արածեցնելու հողերից, 268 դէսեատին 1298 քառակուսի սաժէն տարածութեամբ, այդ հողաբաժնում եղած շինութիւններով և ուրիշ հաստատութիւններով։ Աճուրդը կ'սկսուի 425 րուբլուց։

«Նոր-Դար»-ի Օրացոյց.

1889 թ. Ք.	Յունվար 31 օր.	ՏՑՁԱ Հայկ. Թ.

23 Երկուշաբթի. բձ. Սրբոցն Կիւրակոսի և մօրն Յուղիտայի և Գորդիոսի, Պօղիքտոսի և Գրիգորիոսի։
Հայոց Արաց ամսի 16-ը. Լուսնի 4-ը. Նոր տումարով փետրվարի 4-ը։
1872 թ. Յունվ. 23-ին վախճանեցաւ հռիտասարդ տաղանդաւոր բանաստեղծ Պետրոս Դուրեանը Կ. Պօլսում։

24 Երեքշաբթի. բկ. Սրբոցն Վահանայ Գողթնացւոյն, Եւգենեայ կուսին և հօր նորա Փիլիպպոսի և մօրն Կղօդեայ, և երկուց եղբարցըն՝ Սերգեայ և Ապիտոնի, և երկուց ներքինեաց։
Ծն. Ն. Կ. Բ. Մեծ Իշխանուհի Կսէնիա Ալէքսանդրովնայի։
Արաց ամսի 17-ը. Լուսնի 5-ը. Նոր Տում. փետրվարի 5-ը։

25 Չորեքշաբթի. գձ. պաս։
Արացի 18-ը. Լուսնի 6-ը. Նոր Տում. փետրվարի 6-ը։

26 Հինգշաբթի. գկ. Ս. Եւգինէոսի, Մակարիոսի, Վալերիոսի և Կանդիտոսի Աեկիղասայ.
Արացի 19-ը. Լուսնի 7-ը. Նոր Տում. փետրվարի 7-ը։
1817 թ. յունվարի 26-ին Կ. Պօլսի Գում-Գափուի հայոց թաղում մեծ հրդեհ պատահեցաւ։

27 Ուրբաթ. դձ. պաս։
Առաջին քառորդ լուսնի.—փոփոխական եղանակ. ձիւն և ցուրտ.
Արացի 20-ը. Լուսնի 8-ը. Ն. Տ. փետր. 8-ը։

28 Շաբաթ. դկ. Ս. Գրիգորի Աստուածաբանին։
Արացի 21-ը. Լուսնի 9-ը. Ն. Տ. փետրվարի 9-ը։

29 Կիրակի. աձ. Գ. կնիք ծննդեան. Բարեկենդան Առաջաւորի պահոց։
Արացի 22-ը. Լուսնի 10-ը. Ն. Տ. փետրվարի 10-ը։
1846 թ. յունվ. 29-ին ✝ Մխիթարեան Միաբ. աբբահայր Սուքիաս Սոմալ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցեալ 1887 և 1888 թուերին Անդրկասպեան երկրներում, Բուխարայում և Սմրղանդում ճանապարհորդելիս ձեռք եմ բերել 30 հատ

ՀԻՆ ԴՐԱՄ

որոնց մէջ կան դրամներ Հայոց Արշակ I և Արշակ II թագաւորների, Աղէքսանդր Մակեդոնացու, Հայոց Աբգար թագաւորի, Հին կրակապաշտների, Տրդատի, պարսից, մարգարէ Մուհամմէդի, Թէմուր-Լանգի և այլն և այլն ժամանակներից։

Այդ դրամներից գնել ցանկացողները թող դիմեն Баку, Авакджану К. Арзуманяпцу
(Ա.) 3–1

SANTAL DE MIDY
Pharmacien de 1-re classe, à PARIS
permis en Russie
ՍԱՆՏԱԼ ԴԸ-ՄԻԴԻ
Պարիզի առաջնակարգ դեղագործ Պ. Միդիի Ռուսաստանում ընդունուած.
Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8 և գլխաւոր դեղավաճառների մօտ։
(M.) ե 30—17

SIROP DE RAIFORT IODÉ
DE GRIMAULT & C-e
Pharmaciens à Paris
autorisè en Russie
ՐԵՖՕՐ ԻՕԴԷԻ ՍԻՐՕՊ
Պարիզի Գրիմօ և ընկ. Դեղավաճառների

Այս դեղը գործածւում է քսան տարւէ ի վեր երախաների հիւանդութիւնների դէմ ձկան իւղի և անտիսկօրբիք (противоцынготный) սիրօպի տեղ, և նշանաւոր արդիւնքներ է տալիս։

Երախայոց վզի այլևայլ ուռոյցները, խուլը, և մարմնի, գլխի և երեսի վրայ երևցած բազմատեսակ վէրքերը բժշկելու համար սրանից աւելի ազդու դեղ չկայ։ Միևնոյն ժամանակ բժշկւում է մարմնի մեղկութիւնն ու գունատութիւնը և տալիս է երախաներին իրենց բնական զուարթութիւնն ու աշխուժութիւնը։ Սա անգին դեղ մ'է, ծծող երախայոց մարմնի և գլխի վրայ երևցած վէրքերը բժշկելու և արիւնը մաքրելու համար։
Ծախւում է Պարիզ, Վիվիէն փողոց № 8. т
(M.) գ. 27—15

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Երթևեկութիւն «Թիֆլիս» կայարանում

Գնում է

Բաթում, պօստային.	8 ժ.	49 վ.	առ.
Բագու, ,,	10 ժ.	46 վ.	եր.
Սուրամ, ապ. մար. գն.	3 ժ.	21 վ.	ց.
Աղստաֆա, խառն գն.	8 ժ.	20 վ.	առ.

Գալիս է

Բաթումից. պօստ.	10 ժ.	15 վ.	եր.
Բագուից, »	8 ժ.	6 վ.	առ.
Սուրամից, ապ. մարդ.	8 ժ.	24 վ.	առ.
Աղստաֆայից, խ. գն.	8 ժ.	18 վ.	եր.

Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Լոյս տեսաւ «ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐԻ» ա. մասը՝ երկրորդ տպագրութեամբ։ Սրա առաջին տպագրութիւնը բաղկացած էր 470 երեսից. իսկ սա բաղկացած է 504 երեսից։ Պարունակում է իւր մէջ 184 հատուած, որոնցից մօտ 100-ը նոր են, ա. տպագրութեան մէջ չկային։

Ընդունուած է իբրև դասագիրք ոչ միայն մեր, այլ և ռուսաց դպրոցներում ու դպրանոցներում։ Խորհուրդ է տրւում ամեն ընթերցասէր հայի ձեռք բերել այդ վերին աստիճանի հետաքրքրական ու բազմախորհուրդ գիրքը։ Տպուած է մեծ խնամքով մեծադիր և ընտիր թղթի վրայ։ Ծախւում է Թիֆլիսի գրավաճառանոցներում։ Գինն առաջուանն է, անհամեմատ արժան՝ 1 ր. 25 կոպէկ. ճանապարհածախքով 1 ր. 50 կոպէկ։ Գումարով առնողին հատը 1 րուբլի։—Յօրինողին դիմող՝ գումարով առնողները ճանապարհածախս չեն վճարում։

Հասցէն. «Тифлисъ, на Авлабарѣ. Учителю Ованнесу Назарянцъ». 3—2

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Ուղիղ և կանոնաւոր երթևեկութիւն Մարսէլի և Բաթումի մէջ։
Հինգշաբթի, փետրվարի 2-ին, «ՄԻՆԳՐԷԼԻԱ» (Mingrélie) շոգենաւը, նաւապետ «ԺԻԲՈՒԷՆ» (Giboin) դուրս կը գայ Բաթումից դէպի Տրապիզօն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէլ։
Տեղեկութիւնների համար դիմել ընկերութեան գործակալութեան Բաթումում՝ պ. ԴԱՐԱՆԻՕՆԻՆ, Թիֆլիսում՝ պ. ՌԷՆՕՒՆ, նախկին գալերէյա Արծրունիների № 103. 2—1

ОТКРЫТА ПОДПИСКА
НА ГРУЗИНСКУЮ ЕЖЕНЕДѢЛЬНУЮ ИЛЛЮСТРИРОВАННУЮ ГАЗЕТУ
ТЕАТРЪ
НА 1889 Г.
Газета будетъ издаваться при болѣе благопріятныхъ условіяхъ
подписная цѣна газеты съ доставкой и пересылкой:
На годъ. . . . . 5 р.
На полгода. . . . 3 р.
Отдѣльный номеръ 15 к.
Премія газеты „ТЕАТРЪ"
На 1888 г., годовымъ подписчикамъ Грузинскій Стѣнной Календарь, изд Г. Чарквіани.
На 1889 г., Царица Тамара (большая олеографическая картина).
Адресъ для иногородныхъ: Тифлисъ, редакція газеты «ТЕАТРЪ».
Редакторъ-издатель А. Небіеридзе.
(Խ.) 5—3

Дозволено цензурою. Тифлисъ, 19-го Января 1889 г. Տպարան Կավկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр., д. Читахова